ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/32

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

Ա/Ձ Տիգրան Դավթյանի (պետական ռեգիստրի գրանցման վկայական՝ թիվ 01Ա131017),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.02.2021թ. թիվ 26/26/1200-2021 գրությամբ Ա/Ձ Տիգրան Դավթյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության 27.01.2021թ. թիվ ՊՆ//334-2021 գրության հիման վրա 01.02.2021թ. թիվ 26/26/1200-2021 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Տիգրան Դավթյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Տիգրան Դավթյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Տիգրան Դավթյանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 12.02.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում թիվ ԳՀԱՊՁԲ-20-7/51-2 ծածկագրով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը:

Սույնով ամբողջությամբ առարկում եմ նախաձեռնված ընթացակարգի դեմ և ստորև ներկայացնում առարկության հիմքում ընկած փաստերը և հիմնավորումները.

Նախևառաջ հայտնում եմ, որ իմ կողմից 10.11.2020թ. ՀՀ ԶՈՒ է ներկայացվել դիմում՝ նշելով, որ ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Տիգրան Դավթյանի միջև 21.08.2020թ. կնքվել է Իրային միջոցների մատակարարման վերաբերյալ թիվ ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/51-2 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Դիմումում նշվել է նաև հետևյալը.

ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» թիվ 1586-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրության պայմաններում Հայաստանի Հանրապետությունում հայտարարվել է ընդհանուր զորահավաք և պահեստազորի սպայական, ենթասպայական և շարքային կազմի մինչև 55 տարեկան պահեստազորում հաշվառված քաղաքացիների զորահավաքային զորակոչ:

Ա/Ձ Տիգրան Դավթյանի աշխատող Աշոտ Պետրոսյանը՝ ըստ թիվ ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/51-2 պայմանագրի 3-րդ չափաբաժնի Պայուսակ դաշտային սերժանտական, աշխատանքը իրականացնող միակ վարպետը զորակոչվել է զորահավաքային զորակոչի վերը նշված որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում հայտարարված զորահավաքային զորակոչի շրջանակում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Նույն օրենսգրքի 432-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորությունը դադարում է կատարման անհնարինությամբ, եթե դա առաջացել է այնպիսի հանգամանքից, որի համար կողմերից որևէ մեկը պատասխանատու չէ: Այդ դեպքում պարտատերն իրավունք չունի պարտապանից պահանջել պարտավորության կատարում:

Վերոգրյալի ամփոփմամբ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատերազմն անհաղթահարելի ուժ համարվող հանգամանքների շարքին դասվող սոցիալական բնույթ կրող իրադարձություն է, ինչի հետևանքով անհնար է դառնում Պայմանագրի կատարումը, Դիմումով խնդրել եմ լուծել Պայմանագիրը:

ՀՀ ՋՈՒ-ի կողմից 11.11.2020թ. գրությամբ Ա/Ձ Տիգրան Դավթյանին պատասխանվել է, որ Պայմանագիրը լուծելու համար անհրաժեշտ է դիմել ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչություն, ինչպես նաև այն, որ պայմանագիրը լուծելու համար բացակայում են անհաղթահարելի ուժի ազդեցության հիմնավորումները, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

Ձեր ուշադրությունն եմ ցանկանում հրավիրել այն հանգամանքին, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 22.01.2021թ. Պայմանագիրը միակողմանի լուծելու և Ա/Ձ Տիգրան Դավթյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված ՀՀ պաշտպանության նախարարության 27.01.2021թ. թիվ ՊՆ//334-2021 գրությանը կից վերը նշված դիմումը և դիմումի պատասխանը չեն ներկայացվել:

Միևնույն ժամանակ պարզ և հասկանալի չէ, թե ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» թիվ 1586-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրության պայմաններում Հայաստանի Հանրապետությունում հայտարարված զորահավաքային զորակոչի շրջանակում Ա/Ձ Տիգրան Դավթյանի միակ աշխատող Աշոտ Պետրոսյանի զորահավաքային զորակոչի զորակոչվելու հանգամանքից

բացի այլ ինչ հանգամանք կարող էր հիմնավորել անհաղթահարելի ուժի ազդեցությունը պայմանագրային պարտավորությունների կատարման վրա:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ քննարկման առարկա պետք է դառնան սույն դիրքորոշմամբ ներկայացված փաստերը և հիմնավորումները, հետևաբար նաև Պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Ա/Ձ Տիգրան Դավթյանը ենթակա չէ պատասխանատվության, քանի որ Պայմանագիրը չի կատարել վերը մատնանշված փաստերի և հիմնավորումների հետևանքով, ինչը պատշաճ քննարկման առարկա չի դարձել:

Բերված իրավական հիմնավորումներով և մատնանշված փաստերով ու պատճառաբանությամբ էլ գտնում ենք, որ թիվ ԳՀԱՊՁԲ-20-7/51-2 ծածկագրով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ՆԳ-2021/32 ընթացակարգը ենթակա է մերժման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է Թիվ ԳՀԱՊՁԲ-20-7/51-2 ծածկագրով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ՆԳ-2021/32 ընթացակարգը մերժել:

Այնուհետև՝ 15.02.2021թ., գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի լրումն թիվ ԳՀԱՊՁԲ-20-7/51-2 ծածկագրով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ՆԳ-2021/32 ընթացակարգի վերաբերյալ ներկայացված առարկության՝ կից ներկայացնում եմ նաև արտադրանքների, ապրանքների առաքման հաշիվ վավերագրերը և աշխատողների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնցով մեկ անգամ ևս հավաստվում է, որ ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» թիվ 1586-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրության պայմաններում Հայաստանի Հանրապետությունում հայտարարված զորահավաքային զորակոչի շրջանակում զորահավաքային զորակոչի զորակոչված աշխատող Աշոտ Պետրոսյանը եղել է Ա/Ձ Տիգրան Դավթյանի միակ վարպետը, որն իրականացրել է ըստ թիվ ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/51-2 պայմանագրի 3-րդ չափաբաժնի Պայուսակ դաշտային սերժանտական աշխատանք, հետևաբար նաև հիմնավորվում է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհնարինությունը:

Տեղեկատվության արժանահավատությունը, ըստ անհրաժեշտության, կարող եք ստուգել Պետական եկամուտների կոմիտեում հարցում անելու միջոցով»:

Ա/Ձ Տիգրան Դավթյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/32 ընթացակարգի շրջանակներում 12.02.2021թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և ներկայացրել վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 27.01.2021թ. թիվ ՊՆ//334-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Տիգրան Դավթյանի միջև կնքված գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 22-ին միակողմանի մասնակի լուծել է Ա/Ձ Տիգրան Դավթյանի հետ 21.08.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-7/51-2 ծածկագրով գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 25.01.2021թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/32 ընթացակարգի շրջանակներում 12.02.2021թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/32 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/32 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Տիգրան Դավթյանի միջև 21.08.2020թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-20-7/51-2» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի

N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի հավելված 1-ով՝ գնման ժամանակացույցով, ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ. 4-րդ եռամսյակը՝ ոչ ուշ, քան 10.11.2020թ.:

3. Ա/Ձ Տիգրան Դավթյանին ուղղված 22.01.2021թ. թիվ ՆՏԱ-184 ծանուցմամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Տիգրան Դավթյանի միջև 21.08.2020թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/51-2» գնման պայմանագրի շրջանակներում Ա/Ձ Տիգրան Դավթյանը 2020թ. 4-րդ եռամսյակում պետք է մատակարարեր 2000 հատ Պայուսակ դաշտային սերժանտական, սակայն չի մատակարարել:

Հիմք ընդունելով թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/51-2» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 22-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը վերը նշված ապրանքների մասով»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 25.01.2021թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.02.2021թ. թիվ 26/26/1200-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 27.01.2021թ. թիվ ՊՆ//334-2021 գրությունը և կից փաստաթղթերը, ինչպես նաև Ա/Ձ Տիգրան Դավթյանի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի

գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Տիգրան Դավթյանի միջև 21.08.2020թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-20-7/51-2» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով,

ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի հավելված 1-ով՝ գնման ժամանակացույցով, ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 2020թ. 4-րդ եռամսյակը՝ ոչ ուշ, քան 10.11.2020թ.:

Ա/Ձ Տիգրան Դավթյանին ուղղված 22.01.2021թ. թիվ ՆՏԱ-184 ծանուցմամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Տիգրան Դավթյանի միջև 21.08.2020թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/51-2» գնման պայմանագրի շրջանակներում Ա/Ձ Տիգրան Դավթյանը 2020թ. 4-րդ եռամսյակում պետք է մատակարարեր 2000 հատ Պայուսակ դաշտային սերժանտական, սակայն չի մատակարարել:

Հիմք ընդունելով թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/51-2» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 22-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը վերը նշված ապրանքների մասով»:

<u>Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 25.01.2021թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:</u>

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Այսպիսով՝ անդրադառնալով Ա/Ձ Տիգրան Դավթյանի կողմից ներկայացված դիրքորոշմամբ վկայակոչված փաստական հանգամանքներին՝ հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Ա/Ձ Տիգրան Դավթյանի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է 24.08.2020թ. 575մ «կաշի արհեստական» ապրանքի, ինչպես նաև՝ 08.09.2020թ. 65կգ «կոշիկի սոսինձ» և 112մ/ք «արհեստական կաշի» ապրանքների ձեռքբերման փաստաթղթեր:

Միևնույն ժամանակ Ա/Ձ Տիգրան Դավթյանը դիրքորոշմամբ հայտնել է, որ իր աշխատող Աշոտ Պետրոսյանը՝ ըստ թիվ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/51-2» պայմանագրի 3-րդ չափաբաժնի՝ Պայուսակ դաշտային սերժանտական, աշխատանքն իրականացնող միակ վարպետը զորակոչվել է զորահավաքային զորակոչի վերը նշված որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում հայտարարված զորահավաքային զորակոչի շրջանակում:

Ի հավաստումն վկայակոչված հանգամանքի՝ ներկայացվել է Աշոտ Պետրոսյանի զորակոչի վերաբերյալ ծանուցագիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով,*** եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: (…)

Պայմանագրի 7-րդ կետի համաձայն՝ ***պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:*** Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, ***պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը,*** քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Այսպիսով՝ գտնում եմ, որ Պայմանագրով նախատեսված ապրանքի արտադրության համար ներկայացված հումքի ձեռքբերման փաստաթղթերը վկայում են այն մասին, որ Ա/Ձ Տիգրան Դավթյանի կողմից «Պայուսակ դաշտային սերժանտական» ապրանքի արտադրման համար ձեռնարկվել են համապատասխան նախապատրաստական աշխատանքներ, որոնց ավարտին չհասցնելը պայմանավորված եղել Ա/Ձ-ի աշխատակցի՝ (միակ վարպետ) զորահավաքային զորակոչին զորակոչվելու հանգամանքով:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում եմ, որ Ընկերության վերոնշված հանգամանքերում դրսևորած վարքագիծը չի կարող հանգեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվության, ***քանի որ Ա/Ձ Տիգրան Դավթյանը նման պայմաններում, այն է՝ պայմանագիրը կնքելուց հետո ծագած անհաղթահարելի ուժի՝ ռազմական և արտակարգ դրության և դրա հետևանքով ստեղծված իրավիճակի հետևանքով, որը կողմերը չէին կարող կանխատեսել, օբյեկտիվորեն զրկված է եղել Պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտականությունները կատարելու հնարավորությունից:***

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.02.2021թ. թիվ 26/26/1200-2021 գրությամբ Ա/Ձ Տիգրան Դավթյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**